*Ուլի—Ուլէ=Ցուլան)* բագրկան 2—*ճիշտ* Յովհաննէս Վանականի և *Մարիամ Թագուհու անցքը. և մենք տեսանք նոյնպէս, որ Կում-բի քաղաքը դարձել էր Ղումբիկ Թագաւոր։*

*Աւելի ևս տարօրինակ է և մեր Ջոջանց տան վէպում երևացող Զմշկիկ-Զմուցկիկ սուլթանը*[3]*։ Անտարակոյս սա Բիւզանդիոյ հայ կայսր Յովհաննէս Զմշկիկն է, բայց սա վէպում կին արմատ է և կոչւում է «շատ գեօզալ փեհլուան» (№ 2, ԺԲ, էջ 37)։ Յայտնի է որ նա շատ հռչակաւոր էր, եղել է Տարօնում և դաշնակցութիւն ունեցել Աշոտ Ողորմածի հետ։ Սորա այս սեռափոխութիւնն էր միայն, որ մեզ տարօրինակ էր թւում և դժւարացնում ցարդ այս կարծիքը յայտնելու. սակայն երբ Աստղիկ դիցուհին Ջոջանց վէպում Պարոն և դիւցազն է դարձել, այլևս զարմանալու չէ։*

(Շարունակելի) **Օսեփան Խանայեան**

## Ստացուած գրքեր

1, *Շահնամակ Ֆիրդուսի-ի, դրուագ Արտաշիր Բաբական-ի թարգմանեց Յ. Թիրաքեան Նիւ-Եօրք 1909. գին 2 ֆր.*

2, *Ատրպատ Մարասպանտայ Թարգմանեց ի Պահլաւ բնագրէն հանդերձ ծանօթութեամբք. Յ. Թիրաքեան 1909 Նիւ-Եօրք.*

*Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի և շրջակայից։ Հրատարակեց Սահակ վրդ. Աստուածատրեան. Պրակ Ա. Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1910 Թ։ Ա. պրակի գինն է մի ռուբլի։*

*Գրքի հենց արտաքինը լաւ և հաճոյական տպաւորութիւն է գործում։ Գրքի երեսի վերայ կան կենդրոնում՝ Մեծ և փոքր մասիսները՝ որանց ստորոտում Ս. Էջմիածինը, աջ կողմում Ներկայ Վեհափառ հայրապետի և ձախ կողմում երկրագործ գեղջկուհու պատկերները բաւական յաջող և գեղարուեստօրէն զատուորուած։ Գրքի մէջ զետեղուած են Մայր Տաճարի սրբութիւնների, զգեստների ևն. մի մասի շրջակայ վանքերի լուսանկար պատկերների ընդօրինակութիւնը, թւով 53։ Այս*

---

2. Անդ. Դ. § 44 «Գոտածուրիկ փարէն». էջ (89—92) 90.

3. № 2. (էջ 37. 46. 47. 51. 52) եւ № 7 (էջ 44—45. 54—56 եւ այլն). Սուլթան Զմշկեր կամ Սուլթան Դըմիժ (№ 3. էջ 40—42. 49—53). Սըլթան Զմուչ. Զմուչկ (№ 11. էջ 38—42) եւ Սըլթան Զմուշ (№ 9. էջ 385. 392—395). Այս փոփոխակներից լաւագոյն են № 7 եւ 9.

պատկերների թւումն են և Վ.Ե.Հ. Հայրապետի մեծադիր և Մայր տաճարի պատկերները:

Հաւաքածոյի հրատարակողը պատկերների շարքից առաջ դրել է պատկերների մասին համառօտ տեղեկութիւնները քաղելով մեծ մասամբ Յովհաննէս եպս. Շահխաթունեանի «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի» աշխատութիւնից: Այդ տեղեկութիւնները գրաւում են 7—19 երեսները: Իսկ պատկերները զետեղուած են 32 երեսների վերայ:

Հաւաքածոյի հրատարակողը իր ձեռնարկութեան մասին ասում է. «Ամբողջ գործը պէտք է բաղկանայ հինգ պրակնե-
«րից, իւրաքանչիւրը 50-ական նկարներով. բայց կարող է
«ոմանց մէջ 50-ից մի քիչ աւելի եւս լինին, ինչպէս է ներկայ
«Ա. պրակը, որ 53 նկարներից է բաղկացած: Միւս բոլոր
«պրակների լուսանկարներն արդէն պատրաստուած լինելով՝
«հետզհետէ պէտք է լոյս տեսնեն:

«Գործիս պատկերացոյց հնութիւնների տեսակներն են.
«ասեղնագործ նկարներ ... տպածոյ նկարներ կտաւի վերայ.
«Սրբոց նշխարների ... տուփեր ..., գաղտակուրից (սատաճ)
«Դռներ և Աթոռներ, ... Անօթներ և զարդեր ... գաւազան-
ներ, ... ջահեր, ... ազգային հնութիւններ, ... վանքեր և
տեսարաններ ...»:

Ա. պրակը թէ տպագրութեան և թէ բովանդակութեան կողմից հաճելի տպաւորութիւն է թողնում. Այդ գրաւական է, որ միւս պրակներն էլ սրա նման կը լինեն:

Հաւաքածոյի թուղթը լաւ և տպագրութիւնը գեղեցիկ է:
Ա. պրակի գինն է 1 ռուբլի.

1, Malachia Ormanian cidevant Patriarche Arménien de Constantinople-

Léglise Arménienne son histaire, sa doctrine, son regime, sa discipline, sa liturgie sa litterature, son présent, Paris Ernest Leroux. Editeur 28, rue Bonaparte, VI. 1910.

Записки Кавказскаго отдѣла императорскаго общества. книжка XXVI выпускъ 8 й.

---

В. В. Дубянскій. къ вопросу о горныхъ породахъ съ высшихъ пунктовъ восточной и западной вершинъ Эльбруса.

цѣна 25 коп. Тифлисъ 1910.